որպէս մահապարտ: Արդ թէ արժանի եմ մահու՝ սպան զիս, ապա թէ ոչ՝ ընդէ՞ր կամ ի բանտի»: Իսկ Սաֆի Ղուլի կը պատասխանէ. «Ոչ սպանանեմ զքեզ եւ ոչ արձակեմ, այլ այդը կաց մինչեւ մեռցիս»: «Եւ ինքն ժողովեաց, կ'ըսէ Զաքարիա, զամենայն փարթամ եւ մեծատուն մարդիկ, եւ էառ ի նոցանէ 1300 թուման դրամս, եւ պատճառ եղ՝ թէ Աթոռին պարտն տամք, եւ յետոյ ձեզ հատուցանեն էջմիածնի նստողքն: Եւ պատրեաց զամենեսեան, եւ ինքն լափեաց, եւ ոչ ետ նմա փող մի» (6):

Այնուհետեւ պարտատէրերը, որոնցմէ Խանը դրամ առած էր, սակայն անգամ կու գան կաթողիկոսին մօտ, իրենց ստակը պահանջելու, սակայն ի զուր: Ի վերջոյ խորհրդակցելով կ'ըսեն կաթնաւոր Հայրապետին. «Դու ջանա՛ եւանել այսի, եւ մեք դատ առնեմք Շահին ի Խանէն, եւ դրամն մեր առնումք չահիւն ի դմանէ» (7):

Թէպէտ կաթողիկոսը հակողութեան ներքեւ կը գտնուէր, սակայն ամէն օր ըստ կամս կը չրջէր, ընկերակցութեամբ իր պահակին: Լսելով որ Ծոյներու երկրին կարաւան մը կու գայ Այրարատ, Հայրապետը կ'ըսէ իր պահապանին. «Եկ, դի երթիցուք ընդ առաջ կարաւանին»: Պահակը կը պատասխանէ. «Գոյ ինձ դործ ինչ՝ ես ոչ կարեմ գալ, երթ դու»: Համբարձման օրն էր (30 Ապրիլ 1669): Կաթողիկոսը, ութ օր առաջ,

(6) Զաքարիա, Անդ 78:
(7) Զաքարիա, Անդ 79: